

Հող, մօտդ, գտար բանաստեղծն «Ե՛կ կոչեցիր առ նա, ե՛կ չե՛մ նոյն յորմէ խորշէի՛ր դու, տե՛ս զհարդ զեղեցկացոյց զիս մահ, արար զիս պաշտելի»:


Կը լսե՛ս և հայ Համէթն ու կը մե- նախօսէ «to be or not to be»:

Եւ դու, ինն տարիներ հիւանդագին՝ զայս բացազանչէիւ «ըլլալ կամ ոչ»: Իսկ այս վերջնոյն մէջ, տարիներու խնա- յողութեամբ շինած բոյնդ – զոր տեսնէիր թէ այս կենաց մէջ այլ ևս անհնարին է քեզ աշխատիլ, և աւելի գուրգուրանօք կը յենուիր անոր, – հիւանդ, հագիւ մա- հիճէդ կը խուսափես, երբ վայրկեանի մէջ բոցերն կը ճարակեն զայն՝ նոյն իսկ մա- հիճդ:

Ո. Յ. Փ.

Շարայարեկի

1909 Փետրուար 6



Ո Ղ Ո Ր Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Քաղաքակիրթ աշխարհ զարհուրատալ ակնարկ մը կը նետէ դէպ արեւելք: Ու- ռոսի և Կիւղնոսի պատմական ափուները՝ վայրկեան մը մտախոհ կ'ընէ զԵւրոպայն՝ տեսնելով անոնց վրայ հոսած զազանա- բարոյ մարդկանց զոհերուն ծովացած ա- լբանց առուները: Վայրենիներու ահաբե- կիչ աղաղակները և զօշինը կը մրկէ ամենէն սկեպտիկ քաղաքագէտ վարիչ- ները: Բայց արեւմտեան պետութիւնը զարերով միացեր են յոռի շրջանի մը մէջ: Արեւելեան քաղաքակաւութիւնն իր նրա- շաւիղ բաւղին մէջ՝ անել վիճակի մը մէջ կը թուի մատնուած. այլ մոռցուած մար- ղասիրութեան միշտ փոխանակելով շահու և ապագայի մոլեգնութիւնն վերստին պի- տի տեսն վաղեմի դրութիւնը: Հայը զբժ- բաղդարար պիտի մնայ վերստին անգէտ իր դերին, իր դատը պիտի շահագործուի ի նպաստ զօրաւորներու, դեռ ևս է խա- բուսիկ խոստմանց հեշտ պատրանքին մէջ և զինքը կը յուզեն անփորձ հրապուրիչ զրչակներ:

Վաղեմի գրիչներ նկարագրեր են հա- յուն տիպարը և իր անցեալը, բայց չկայ այս շրջանիս համանմանը անոնց մէջ: Կը պակասի յիշատակարան, արձանագրու- թիւն, վիպագիր, ճշմարտապէս պատկերե- լու ինչ որ Արեւելք երեսուն տարիներու մէջ տեսաւ: Հոս Եւրոպիոյ մէջ, երբ ժո- դովուրդը կը լսէ ականատես, ականջալուր հաւատարիմ անձերէ ինչ որ զարգացեալ դարուս մէջ, հաւասարութիւն, եղբայրու-



թիւն և ազատութիւն հռչակող տէրութեանց առջև կը հանդիպին՝ անհաւատալի կը կար- ծուին: Այլ իրն այսպէս է. այժմ Կիլի- կիա արեանց մէջ թաթաւուած է, են- թարկուած թալանի և բռնաբարութեան, այժմ Փոքր Ասիոյ ամէն կողմերն մատ- նուած են չարաշուք բաղդին, որ կը սպառ- նայ զարհուրանք և պծանք: Հայու սիրտ կրող հոգիք, այլ ևս պէտք չէ խորիք անցեալը, այլ ներկայ հայը, ներկայ Կի- լիկեան: Գեղեցկադիր Ատանայն, պան- ծացողն իր պերճութեամբ, ճոխութեան և վարժարաններով, այժմ դառնութեան բաժակին վերջին մրուրն ըմպեց: Չկայ

ընտանիք մը որ կողոպտուած չըլլայ, չըկայ տուն մը որ չիլլայ իր սիրելիներէն մի քանիները. աւերակներու դերբուկ մ'է Ատանայի հայոց քրիստոնէից թաղերը: Որդեկորոյս հայր մը, կարող չէ անգամ իր որդեացելոյն վրայ կանգնել խաչափայտը, մայր մը ի զուր կը կոչէ իւր կոյս աղջիկը, եղբայր մը հեկոտ ի զուր կը թափառի որոնելու իր հարազատները, որոնք զեղածիծաղ տարիներով ուռնացած՝ յոյսեր էին իրենց գերդաստանին պայծառութեան:

Աղէխարը և սրտակէզ է լսել աղաղակն և վայերն վիրաւորուածներու և անօթիներու, կը պակասի շատերուն օրուան պատառ մը հացիկը, կը պակասի իրենց մերկութիւնը ծածկող վերարկուն, կը պակասի զիրենց պատսպարող հիւրը:

Ձկայ լրագիր, որ ամէն օր չբերէ մեզ քստմեցուցիչ իրականութեան մը տխուր պատկերը: Ամէն կողմ սպառնալիք, ամէն կողմ պատուոյ և ընչից և կենաց անապահովութիւն: Վերահաս է շատ դժբաղդներու չարատանջ մահը և թշուառ կորուստը, եթէ փութկոտ նպաստներ զլացուին աղքատին, զրկեալին, աքսորեալին...

Ազնիւ տիկին մայրեր, անգամ մը խորհեցէք ձեր սրտեղծատու մանուկները, ձայն զութը որ կը շռայլէ իրենց վրայ, խորհեցէք, որ այժմ այդպիսի սիրուն մանուկներ կորուսեր են ձեզ նման զթոտ և ազնուախոհ մայրեր, լքուած են և մատնուած... ի սէր ձեր անուշիկներուն ողորմեցէ՛ք որբերուն...

Փափակախիտ օրիորդներ, որ կը շնչէք Էրոպիոյ Ամերիկայի ազատ և քաղցրաբոյր ազատութիւնը, խորհեցէք Ձեզ նմանները, որ իրենց ծննդավայրին մէջ զուրկ ամէն վայելքներէ և ազատութենէ, լիկուած անարգներէ... այժմ կարօտ զգեստի և հացի՝ ողորմութիւն կ'աղաղակեն, փրկեցէք զիրենց մահու և անարգութեան ճիրաններէն...

Հայրեր և բարեգութ հայրեր, ձեր մտքի և մարմնոյն կորովով վառ պահեցէք ձեր նախնեաց խարոյկը. աւանդ, քանի՛ այդպիսի

օրհնակ խարոյկներ շիջան, կիլիկեան սարաւանդներու և ծործորներու մէջ, դեռ կան և կը մնան ծխացող խարոյկներ հոն, ուր մեր նախնիք կը հանգչին իրենց քաջութեամբը, մի՛ թողուք որ բուրբովին անհետ երթայ այդ մեր պատմութեան նշխարը: Թող հրճուին հոն սրբազան նախնեաց աճիւններն ձեր առատածեռն նուէրներով և ապագայ սերունդը օրհնէ բարեբարներու յիշատակը: Երբ արևը շանդէս ի տես կը դնէ Տոսթեր որբուհիները, հրաւէր կը կարգայ իւր ազնիւ ընթերցողներուն ընդունելու զօրութեան և շնորհակալութեան հաւաստիք այն ամենայն ճշմարիտ բարեբարներու, որ գիտցեր են գոտակար ընել իրենց քրտանց վաստակը ազգին և մարդկութեան համար:

Ո՛վ արդեօք չիտեսներ որբուհիներուն դիմագծին վրայ երախտապարտութեան շնորհը դէպի իրենց դաստիարակները և բարեբարները: Նկարագրի տէր անձինք՝ երջանիկ են որ կրցեր են երջանկացնել մինչև ցօրս այս որբուհիները:

Արդ կը մնայ սրբազան պարտք մը պահպանել զատնը և ասոնց բաղդին վիճակել մեր նոր որբերը:

Ունենանք պիտի արդեօք բարեբարողութիւն գրելու այս անգամ ևս նոր անմահ Ջանշեաններու և Եզեան օրիորդներու քաղցր յիշատակները...

* * *

Կ Ո Ձ Հ Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Ի Դ Ի Ն

Ազգերու և ժողովուրդներու զարգացման, յառաջդիմութեան ամենամեծ ազդակներէն մին՝ իգական սեռի կրթութիւնն է: Կարթուումն է՝ Որչափ ու տասնեակ տարիներ առաջ վանի մէջ ուղղորդութիւն դարձուած է իգական սեռի կրթութեան վրայ և հիմայ թէ՛ և մանչ ու աղջիկ հաւասար կ'ուսանին, սակայն դեռ նախապաշարունակներ շատ զօրաւոր են, դեռ շատ դժուար է վանեցի նոյն իսկ համեստ ապրուստ ունեցողի համար մտածել թէ ոչ